# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Խաչպար ՍՊԸ-ն ԻԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/7 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 55 | Դիասեպտիկ-30, 250 մլ, աէրոզոլ կամ համարժեքը | Դիասեպտիկ 70, ցողացրիչ 250 մլ | Դիասեպտիկ 70, ցողացրիչ 250 մլ | Ինտերսեն պլյուս | Միջոցը իրենից ներկայացնում է մաշկային հականեխիչ՝ կիրառման համար պատրաստ հեղուկի տեսքով, 250մլ: Որպես ազդող նյութեր պարունակում է սպիրտներ՝ 70 %-ից ոչ պակաս, ՉԱՄ-երի, գուանիդինի, և/կամ այլ խմբերին պատկանող ախտահանիչ նյութեր, ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ, այդ թվում՝ ջրի կոնդիցիոներ, էմուլգատոր, փափկացնող հավելումներ, E վիտամին և դեիոնիզացված խմելու ջուր: Ախտահանիչ միջոցը օժտված է հակամանրէային ակտիվությամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ (այդ թվում` տուբերկուլոզի հարուցիչների, թեստավորված Mycobakterium Terrae շտամի նկատմամբ), ներհիվանդանոցային վարակների, ախտածին սնկերի` դերմատոֆիտների և կանդիդոզների հարուցիչների, վիրուսների (ներառյալ ադենովիրուսները, գրիպի, սուր շնչական վարակների այլ հարուցիչներ, էնտերովիրուսներ, պոլիոմիելիտի վիրուս, ընդերային և արտաընդերային հեպատիտների, հերպեսի, մարդու իմունային անբավարության վարակի , ատիպիկ թոքաբորբի, թռչնի գրիպի վիրուսներ): Ախտահանիչ միջոցը որպես մաշկային հականեխիչ նախատեսված է բոլոր բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների վիրաբույժների և վիրահատությանը կամ այլ ինվազիվ միջամտություններին մասնակցող անձնակազմի, բուժանձնակազմի, ինչպես նաև 10 տարեկանից բարձր երեխաների և մեծահասակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | բնակչության կենցաղում ձեռքերի հիգիենիկ էքսպրես-ախտահանման համար, վիրահատությունից, ինվազիվ միջամտությունից, ներարկումներից, բուժական և ախտորոշիչ պունկցիայից առաջ, վիրահատական և ներարկային դաշտերի, դոնորների արմնկային ծալքերի ախտահանման և ճարպազերծման համար: Միջոցի հակաբակտերիալ ազդեցության տևողությունը` ոչ պակաս 3 ժամ: Պահպանման ժամկետը` 5 տարի: Մատակարարման պահին ապրանքի պիտանիության ժամկետի առնվազն 2/3-ի առկայություն: Վտանգավորության աստիճանը` 4-րդ դաս: Պետք է ունենա ՀՀ ԱՆ կողմից հաստատված կիրառման մեթոդական հրահանգ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Խաչպար ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԻԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/7 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 55 | | | | | |